

Հաստատված Վ.Գետաշեն
համայնքի ավագանու
31.01.2020թ-ի №1 որոշումով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

2020-2024 ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Վ.ԳԵՏԱՇԵՆ 31.01.2020թ.

Բովանդակություն

1. <u>Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք</u>	3
2. <u>Համայնքի իրավիճակի նկարագրություն</u>	4
2.1. <u>Համայնքի քնդհանուր նկարագրություն</u>	5
2.2. <u>Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը</u>	6
2.3. <u>Համայնքում իրականացվող ծրագրերը</u>	7
2.4. <u>Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները</u>	7-8
2.5. <u>Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ</u>	8
2.6. <u>Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՌՀՄ) վերլուծություն</u>	9
3. <u>Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում</u>	10-12
3.1. <u>Համայնքի զարգացման տեսլական</u>	11
3.2. <u>Համայնքի զարգացման անմիջական նպատակներ</u>	12
4. <u>Ռիսկների նվազեցում</u>	12
5. <u>ՀՀԶԾ ֆինանսավորում</u>	13
6. <u>ՀՀԶԾ մոնիթորինգ</u>	13

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՅՈՒՆԻ ԽՈՍՔ

Համայնքի առաջիկա հինգ տարիների զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտներն են հանդիսանում անասնապահության և դաշտավարության զարգացումները:

Այդ ոլորտների զարգացման համար հիմնական խոչընդոտը հանդիսանում է իրացման շուկայի, գնային քաղաքականության ոչ հաստատուն լինելը և

արտերկիր դուրս գալու փոքր ու միջին բիզնեսի անկարողությունը:

Դրա լուծման համար նախ պետք է ստեղծել խոշոր ֆերմերային տնտեսություններ և համայնքում ստեղծված կոպերատիվի զարգացումը, որը իր մեջ կներառի ոչ միայն անասնապահական և գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, այլ նաև կաթի և մսի վերամշակման արտադրամասերի հիմնումը, կաթնամթերքի, մսամթերքի և բանջարաբուստանային կուլտուրաների արտահանման շուկաների գտնելը: Համայնքում անասնապահությունը զարգացնելու համար պետք է ապահովվել գյուղից ամառային արոտ տեղափոխվող անասնազլխաքանակի զարգացման և անասնապահական մթերքների արտադրությունը ավելացնելու համար պետք է յայլադատեղերում ապահովվել էլ. Հոսանքի արկայությունը, իսկ գյուղ. տեխնիկայի համար՝ դաշտամիջյան բարեկարգված ճանապարհներ, անասնապահությամբ զբաղվող մարդկանց գոնե մինիմալ բարեկեցիք կյանք ապահովելու՝ տարվա 7-8 ամիսների ընթացքում:

Դաշտավարության զարգացման համար անհրաժեշտ է ձեռք բերել հացահատիկահավաք կոմբայն, կարտոֆիլի ցանոդ քանդող գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ:

Այդ ոլորտների զարգացման համար անհրաժեշտ է որդեգրել այնպիսի քաղաքականություն որպեսզի երիտասարդությունը արտերկիր բախտ որոնելու փոխարեն մնա և աշխատի իր ծննդավայրում, որի համար բոլոր անհրաժեշտ պայմանները կան:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում պետք է կարողանանք բարեկարգել և ասֆալտապատել բոլոր ներհամայնքային ճանապարհները:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և գյուղապետարանի աշխատակազմը:

Համայնքի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի քննարկվել և հաստատվել է հաստատվել է ավագանու կողմից:

Առաջիկա հինգ տարիներին հնարավոր է համայնքում առաջանան նոր խնդիրներ, որոնց լուծման համար պետք է վերանայել համայնքի հինգ տարիների զարգացման համար կազմված սույն ծրագիրը և գտնել այդ խնդիրների լուծման նոր ուղիներ և միջոցներ:

Կազմված ծրագիրը որպես առաջիկա հինգ տարիների համայնքի զարգացման տեսլականը իրատեսական է և արժանանում է, ինչպես համայնքի բնակչության, համայնքի ավագանու այնպես էլ իմ հավանությանը:

Համայնքի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքի, և գյուղապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը և այն ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը, որն էլ իր հերթին հավանություն է տվել համայնքի զարգացման համար կազմված հնգամյա ծրագրին և հաստատել է այն:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևանա լճի հարավ-արևելյան ափերին փռված լեռնաշխարհի տարածքում տեղավորված Գեղարքունիքի մարզի բնակավայրերի շարքում իր ինքնատիպությամբ առանձնանում է Վ. Գետաշեն համայնքը, հատկանշականն այն է, որ համայնքի անդամները աշխատում և ապրում են բարձր լեռնային պայմաններում: Արմաղան լեռան փեշերին ծվարած գյուղում անասնապահության և հողագործության զարգացման համար նպաստավոր պայմանները սահմանափակ են, քանի որ ձմռան տևողությունը տարածաշրջանում տևում է 6-7 ամիս:

1828 թվականին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ Գավառի Խաստուր գյուղից գաղթած ընտանիքներից հիմնադրված Վերին Գետաշենը ներկայումս ունի 4500 բնակիչ, բնակչության սեռական շերտավորումը այդքան էլ մեծ չէ, գերակշռող մասը կազմում են արական սեռի ներկայացուցիչները:

Համայնքում դժվար է լուծել հատկապես կանանց զբաղվածության խնդիրը: Ընդհանուր առմամբ տարածաշրջանի մյուս համայնքների նման Վ. Գետաշենում նույնպես դժվար է զբաղվածության խնդրի լուծումը: Այսօր գյուղում չկա ոչ մի արդյունաբերական ձեռնարկություն, բնակչության հիմնական մասը զբաղված է անասնապահությամբ ու հողագործությամբ:

Մի շարք օբյեկտիվ պատճառներով համայնքի ունեցած 1130 հա հողատարածության զգալի մասը չի օգտագործվում՝ 500 հեկտար ցանքատարածություն անջրդիր է, չի մշակվում գյուղից հեռու լինելու պատճառով և ենթարկվում է էրոզիայի, որի վերականգման համար առաջիկայում զգալի միջոցներ ու ժամանակ է պահանջվելու:

Գնալով համայնքում թե անասնազվաքանակի և թե բանջարաբուստանային կուլտուրաների արտադրության աճը դանդաղում է, քանի որ բերքի և գյուղատնտեսական մթերքների իրացումը գյուղացիական տնտեսությունների համար մնում է լուրջ հիմնահարց, ուստի՝ սոցիալապես անապահով բնակչությունը չի կարողանում նույնիսկ ժամանակին մուծել տեղական հարկերն ու տուրքերը: Դժվար է ասել, թե ինչպես կհաղթահարեր Վ. Գետաշենցին բազում դժվարություններ, որոնք իհայտ են գալիս Վ. Գետաշենցու ապրելու միջոցներ հայթայթելու համար, եթե չլիներ արտագնա աշխատանքը, որով զբաղվում են համայնքի շուրջ 500 ընտանիքներ: Գյուղում առկա է բնակչության սոցիալական ծայրահեղ բևեռացում: Երիտասարդությունը գյուղում զբաղմունք չունենալու պատճառով, թողնում է գյուղը և հեռանում: Այնուամենայնիվ գյուղում մնացողները իրենց տքնաջան աշխատանքով ծաղկեցնում և շենացնում են համայնքն ու իրենց տնտեսությունները: Վ. Գետաշենը ունի սոցիալական զարգացման հատուկ ու հիմնավորված ծրագիր: Այդ կարևոր փաստաթուղթը ունի ինչպես հեռանկարային, այնպես էլ ընթացիկ նպատակներ: Ընթացիկ այն առումով, որ գրեթե ամեն տարի վերանայվում և շտկվում է ծրագրիը այնուամենայնիվ ծրագրի հիմքում մնում է բնակչության զբաղվածության և գյուղատնտեսական մթերքների իրացման խնդրի լուծումը, ըստ որի պետք է զարգացվի փոքր և միջին բիզնեսը, որի օրինակը գյուղում արդեն կա: Քիչ կարևորություն չեն ներկայացնում ոռոգման ջրի խնդիրը, գյուղական ճանապարհների բարեկարգումը, կրթության, մշակույթի, առողջապահության բնագավառների խնդիրները: Սրանք առաջնահերթ լուծում պահանջող հիմնահարցեր են, որոնց լուծման համար մեր օրերում գյուղապետարանը թույլ օղակ է, ասել, որ գյուղապետարանը ունի այդ ֆինանսական միջոցները նշված հիմնահարցերի լուծման համար, ճիշտ չի լինի: Կարևոր է նշել, որ գյուղում դրսից բազմաթիվ ծրագրեր են ներդրվել, որոնք ուղղվել են սպասարկման ոլորտին: Չնայած ֆինանսական սուղ պայմաններին,

գյուղապետարանը անմաս չի մնացել պահանջվող անհրաժեշտ ներդրումներից: Համագործակցության արդյունքում գյուղում լուծվել է խմելու ջրի հիմնախնդիրը, կառուցվել է բուժ.ամբուլատորիա, վերանորոգվել է մշակույթի տունը, որն այսօր լիովին ծառայում է իր նպատակին: Մշակույթի տան խնդիրը մնում է գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերումը: Բարեկարգվել են գյուղամիջյան ճանապարհները, այժմ էլ անհրաժեշտություն կա նրանք ասֆալտապատել:

Վ. Գետաշեն համայնքն ունի 4500 բնակիչ, որից տղամարդիկ կազմում են 51 %: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

Երեխաներ (0-6)	418
Դպրոցականներ (6-17)	561
Չափահաս բնակիչներ (18-65)	3230
Թոշակառուներ	645
Հաշմանդամներ	480
Աշխատունակներ	2750
Գործազուրկներ	200
Ընտանիքների (ծխերի) թիվը	1320
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	250
Գրանցված ընտրողների թիվը	3230
Հայրենական պատերազմի մասնակիցներ	1
Զոհվածների ընտանիքներ	7
Փախստականներ	0

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 20թ-ի համար կազմում է 180491.320 հազ.դրամ Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 22.3%: Համայնքը արդյունաբերական ձեռնարկություններ և արդյունաբերական արտադրանք չունի: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսությամբ զբաղվողները զբաղվում են կարտոֆիլի, ցորենի, գարու, կաղամբի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ, իսկ անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու և մեղր:

Երաշտ եղած տարիներին գյուղատնտեսությունը կանգնում է մեծ դժվարությունների առաջ, որի պատճառով էլ հողի մշակները բերքի առումով մնում են դատարկաձեռն:

Անհրաժեշտություն կա վերանորոգելու գյուղի ոռոգելի տարածքների համար նախատեսված ոռոգման ցանցի առումները և ձեռք բերել կարտոֆիլի, ցորենի, գարու, և այլ տիպի էլիտար սերմեր:

Գյուղտեխնիկայի, սերմերի թունաքիմիկատների և պարարտանյութերի կենտրոնացումը համայնքի ենթակայության տակ հնարավորություն կնձեռնի այն նպատակաուղղված ձևով տրամադրելու գյուղացիական տնտեսություններին, որը հնարավոր է միայն պետության կողմից հովանավորմամբ, ինչպես նաև ֆինանսական օգնությամբ:

1.Համայնքն ունի 1370 գյուղացիական տնտեսություններ, 1861 գլուխ խոշոր եղջերավոր, 850 գլուխ մանր եղջերավոր անասուններ և 350 հատ մեղվաընտանիքներ:

2.Համայնքն ունի 10460հա վարչական ընդհանուր տարածք

3. Գյուղմթերքների և անասնապահական մթերքների հիմնական տեսակների արտադրության և ցանքսատարածությունների ծավալները տարվա կտրվածքով կազմում է

Արտադրվող մթերքներ՝

ա. ցորեն	3800g
բ. գարի	5000g
գ. կարտոֆիլ	22500g
դ. կաղամբ (բանջարեղեն)	35տ.
ե. միրգ	85 g
զ. կաթ	20150 g
է. բուրդ	20g
ը. ձու	855000 հատ
թ. մեղր	58 g
ժ. միս	9600g

Ցանկատարածություններ՝

ա. Հացահատիկ	440հա
բ. կարտոֆիլ	110 հա
գ. բանջարաբոստանային կուլտուրաներ	16 հա
դ. կաղամբ	5.5 հա
ե. մրգատու այգի	31 հա
զ. առվույտ	35 հա
է. կորնգան	35 հա
ը. միամյա խոտեր	250 հա

Համայնքի բնակչության կողմից արտադրված մթերքները հիմնականում սպառման շուկաներ չունեն և այն իրացվում է մասնավոր մանրածախ առևտրով:

Համայնքում զբոսաշրջության զարգացման համար կա բավարար պատմամշակույթային հուշարձաններ, խաչքարեր համայնքում գործում է 1867թ-ին կառուցված և վերանորոգված «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցին որի բակում է ամփոփված Զորավար Անդրանիկի զինակից Վահան Աղջնեցու աճյունը: Եկեղեցին ծառայում է ոչ միայն մարդկանց ծիսակատարությունների կատարման վայր այլ նաև աղոթատեղի և որ այն կարևոր նշանակություն ունի գյուղում ծայր առած աղանդավորության տարածման պայքարի գործում:

Գյուղը ունի գործող վերանորոգված կահավորված և լրկալ ջեռուցմամբ մսուր մանկապարտեզ որտեղ հաճախում են համայնքի շուրջ 125 երեխաներ, 2 միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են շուրջ 700 աշակերտներ և բուժամբուլատորիա, որը սպասարկում է տարեկան 5845 մարդ:

Համայնքից շուրջ 250 ընտանիքներ գրանցված են ընտանեկան նպաստ ստանալու համակարգում:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից առաջիկա 5 տարիների համար նախատեսված է հիմնովին վերակառուցել գյուղի թիվ 2 մեջնակարգ դպրոցի շենքը, որը կառուցվել է 1956թ-ին, քայքայվել է մաշվել է, ունի փայտյա ծածք և միջնորմային պատեր:

Վ.Գետաշեն համայնքը հարևան համայնքների հետ համատեղ գալիք տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ չունի:

Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների համագործակցության շրջանակներում շարունակական ծրագրերի շրջանակներում նախատեսվել է ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը:

Վ.Գետաշեն համայնքում տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ չկան:

Պետության կողմից համայնքում իրականացվող ծրագրերի պարագայում՝ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնովին վերակառուցումից հետո զգալի ազդեցություն կունենա համայնքի կրթական մակարդակի բարձրացմանը կապելանա դպրոց հաճախման տոկոսը, կապահովվի երեխաների անվտանգությունը, ինչպես նաև այդ կրթահամալիրում աշխատողները կաշխատեն աշխատանքին նորմալ պայմաններում:

1. Համայնքի յայլադատեղերում էլ. հոսանքի ապահովվում և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

2. Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնովին վերակառուցում

3. Համայնքի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների և բուժամբուլատորիայի վերանորոգում

4. Համայնքում խաղահրապարակի կառուցում

5. Համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերում:

6. Նպաստել զբոսաշրջության զարգացմանը:

7. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում

8. Ոռոգման համակարգի բարելավում և ընդլայնում:

9. Աշխատատեղերի ստեղծում

10. Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման հնարավորությունների ստեղծում

11. Զարգացնել մանր և միջին բիզնեսը

12. Նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման և ընդգրկել նրանց համայնքային կարևորագույն խնդիրների և ծրագրերի մշակման գործում:

3 Էրեբունի կոչվող տարածքում՝ բնակիչների կողմից 1995թ-ին աճուրդով գնված հողամասերի չափագրում, նպատակային նշանակության փոփոխում և կազմակերպել աճուրդ վաճառք:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի ֆինանսական միջոցները դա համայնքի բյուջեն է, որը գոյանում է համայնքի սեփական եկամուտներից և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից:

Համայնքի բյուջեն եկամտային մասով 2020թ-ի համար կազմում է 145458.193 հազ. դրամ:

Համայնքի բյուջեն ծախսային մասով 2020թ-ի համար կազմում է 180491.320 հազ. դրամ:

Ծրագրերի իրականացման համար համայնքին հասանելի այլ ֆինանսական միջոցներ չկան

1. Ներքոհիշյալ աղյուսակով ներկայացվում է ֆինանսական կանխադետումները 5 տարիների կտրվածքով և ելակետային տարվա ցուցանիշների հետ համեմատյալ:

ՀԱԶ ԴՐԱՄ

	Մուտքերի անվանումը	2020թ Կանխ.	2021թ Կանխ.	2022թ Կանխ.	2023թ Կանխ.	2024թ Կանխ.
1	2	4	5	6	7	8
	Բյուջետային մուտքեր՝ ընդամենը (I+II)	145458.193	151738.0	160038.0	165288.0	170100.0
I	Ընդամենը եկամուտներ (1+2+3) ////	145458.193	151738.0	160038.0	165288.0	170100.0
1	Հարկեր և տուրքեր	23182.333	29238.0	30438.0	31638.0	32838
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	--	--	--		
	Գույքահարկ շենք. և շինու. Համար	182.0	182.0	182.0	182.0	182.0
	Հողի հարկ	5206.0	5206.0	5206.0	5206.0	5206.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	--	--	--		
	Գույքահարկ փոխադրամիջոց. Համար	16000.0	17000.0	18000.0	19000.0	20000.0
	Աղբահանություն	2619.160	2700.0	2750.0	2800.0	2850.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործ իրակ. թույլտվության համար	-	-	-		
	Տեղական տուրքեր	1794.333	1850.0	1900.0	1950.0	2000.0
	Հողի վարձավճար	4446.0	4500.0	4600.0	4650.0	4700.0
	Ծնողական մուտքեր	2200.0	2300.0	2400.0	2500.0	2600.0
1.4	Պետական տուրքեր					
1.5	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրությամբ խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում հարկերի գումարների նկատմամբ					
2	Պաշտոնական դրամաշնորհներ					
2.1	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշ.					
1	2	4	5	6		
Ա.	Պետատան բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	113010.7	118000.0	125000.0	129000.0	132562.0

Բ.	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	---	---	---		
3.1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	4446.0	4500.0	4600.0	4650.0	4700.0
3.2	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ					
II	Համայնքի բյուջեի միջոցները տարեսկզբի ազատ մնացորդի	31741.807	32000.0	33500.0	34200.0	35000.0

Ֆինանսական կանխատեսումները կատարվել են փոխադրամիջոցների գույքահարկի ավելացվող հաշվին տարվա կտրվածքով 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.5Վ.ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ.Գետաշեն համայնքի զարգացման նորմալ գործընթացի համար խոչընդոտներ և դժվարություններ են հանդիսանում հիմնականում համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների սղությունը, պետության կողմից պակաս հովանավորչությունը, բնակլիմայական պայմանները (շուրջ 6-7 ամիս ձմեռ է) համայնքի բնակչության կողմից արտադրված գյուղատնտեսական, անասնապահական մթերքների իրացումը, միգրացիան և արտագնա աշխատանքի մեկնողների թվի բարձր տոկոսը:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- 1.Ազատ աշխատուժի արկայություն
- 2.Համայնքն ունի անասնապահության զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ հատկապես արոտավայրեր և կերաբազա:
- 3.Համայնքն ապահովված է 24 ժամյա շուրջօրյա ջրամատակարարում:

Համայնքի թույլ կողմերն են՝

- 1.Գործազրկությունը
- 2.Արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվաքանակը
- 3.Զգալի քանակությամբ հողերի անջրդելիությունը
4. Աղքատության շարունակվող աճը
- 5.Միգրացիան
- 6.Ոռոգման ջրի պակաս

Համայնքի հնարավոր սպառնալիքներից կարելի է առանձնացնել՝

- 1.Տարերային աղետները (երկրաշարժ, ջրհեղեղ, երաշտ և այլն)
- 2.Բնակլիմայական խիստ անբարենպաստ պայմանների պատճառով մշակաբույսերի ցրտահարությունների հավանականությունը:

Համայնքային բյուջեի ընդհանուր ծախսերը, ընթացիկ ծախսերը և կապիտալ ծախսերը հստակ տարանջատվում են ներքոհիշյալ աղյուսակի միջոցով:

	Ընդհանուր ծախսեր Հազ.դրամ	Ընթացիկ ծախսեր Հազ.դրամ	Կապիտալ ծախսեր Հազ.դրամ
2020	180491.320	116458.193	64033.127
2021	183738.0	121390.4	62347.6
2022	193538.0	128030.4	65507.6
2023	199488.0	132230.4	67257.6
2024	116085.0	136080.0	69020.0

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1. Համայնքին պատկանող յայլադատեղերում անասնապահությամբ զբաղվող բնակչության նորմալ կենսապայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է բարեկարգել դաշտամիջյան ճանապարհները և յայլադատեղերում ապահովվել էլ. հոսանք:

Նախկինում Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն, Մադինա, Ներքին Գետաշեն և Լիճք համայնքների յայլադատեղերը ՀՀ կառավարության 2010թ-ի որոշումով այժմ ընդգրկված են Վերին Գետաշեն համայնքի վարչական սահմաններում:

Խորհրդային տարիներին նշված յայլադատեղերում ապրելու և անասնապահությունը զարգացնելու համար կար բավարար կենսական պայմաններ՝ հատկապես էլ. հոսանքի արկայությունը: Խորհրդային միության փլուզումից հետո վերը նշված յայլադատեղերում քանդվել և ապամոնտաժվել է էլ. հոսանք ապահովող գիծ:

Այժմ բազմաթիվ ընտանիքներ, որոնք զբաղվում են անասնապահությամբ յայլադատեղերում ապրում են վաթարագույն պայմաններում առանց էլեկտրականության: Յայլադատեղերում էլեկտրականության առկայության դեպքում համայնքում բուռն կերպով կզարգանա անասնապահությունը և շեշտակի կավելանա անասնապահական մթերքների արտադրությունը:

Ծրագրի իրականացման համար, որպես աջակից և ֆինանսական աղբյուր կարող է հանդիսանալ Հայաստանի էլ. ցանցեր՝ «ՀԷՑ» ՓԲԸ:

2. Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնովին վերակառուցում, որը կառուցվել է 1956թ-ին:

Դպրոցի հիմնովին վերակառուցման դեպքում ակնկալվում է երեխաների անվտանգության ապահովում, համայնքում կրթական մակարդակի բարձրացում և այդ կրթահամալիրում աշխատողների համար նորմալ աշխատանքային պայմանների ստեղծում:

Ծրագրի իրականացումը հնարավոր է ՀՀ պետ. բյուջեի միջոցներով:

3. Համայնքի 2 միջնակարգ դպրոցների և բուժամբուլատորիայի վերանորոգում: Ծրագրի իրագործումից ակնկալվում է բնակչության կրթական մակարդակի բարձրացում և առողջապահական բազմաթիվ խնդիրների լուծում:

Ծրագրի իրականացումը հնարավոր է ՀՀ պետ. բյուջեի միջոցներով:

4. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում: Ինչքան էլ որ համայնքի գյուղապետարանը համայնքի բյուջեի միջոցներով բարեկարգի ներհամայնքային ճանապարհները, միևնույն է 1-2 անգամ տեղացած անձրևներից հետո այն դառնում է

անանցանելի ինչպես տրանսպորտի, այնպես էլ բնակչության տեղաշարժի համար՝ հատկապես անձրևային օրերին: Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումից մեկընդմիշտ կվերանա երթևեկության հետ կապված բոլոր տիպի անցանկալի խոչընդոտները: Ծրագիրը հնարավոր է մաս-մաս իրագործել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով և հնարավոր բարերարների օգնությամբ:

5. Համայնքի ոռոգման ցանցի բարեկարգում և ընդլայնում:

Համայնքի ոռոգման ցանցը գտնվում է անբարվոք վիճակում, որի պատճառով էլ համայնքում զգալի քանաքությամբ՝ շուրջ 250հա ոռոգելի տարածքներ չեն մշակվում, իսկ ոռոգվող տարածքների ոռոգման ժամանակ տեղի է ունենում ջրի հսկայական կորուստ: Համայնքի ոռոգման ցանցի հողահունային ներտնտեսային առուների վերականգնումը D=426մմ, D=530մմ և D=650մմ տրամաչափի երկաթյա խողովակներով և կիսախողովակներով: Ոռոգման ցանցի բարեկարգման շնորհիվ համայնքում կավելանա ինչպես ցանքատարածությունները այնպես էլ մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերից ստացվող բերքատվությունը, աշխատատեղեր և համեմատաբար կնվազի արտագնա աշխատողների թիվը: Ծրագրի իրականացումը հնարավոր է «գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման» ԾԻԳ ՊՀ-ի ֆինանսավորմամբ:

6. Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման հնարավորությունների ստեղծում: Ծրագրի իրականացման դեպքում՝ երբ բնակիչը չի ունենա բերքի իրացման կամ վերամշակման խնդիր ավելի սերտ կամրանա հողին երիտասարդությունը կիրառարվի արտագնա աշխատանքից գյուղացին կունենա իր կայուն աշխատատեղը ինչպես նաև երեխաները կկտրվեն փողոցից, որի շնորհիվ կնվազի հանցագործությունների թիվը: Ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար պետք է գտնել համապատասխան ներդրողներ:

7. Մանր և միջին բիզնեսի զարգացում:

Ծրագրի իրագործումից ակնկալվում է կայուն աշխատատեղեր և համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի լավացում:

Ծրագրի իրագործումը հնարավոր է բանկերից գյուղացուն տրամադրել երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքներով վարկեր:

8. Համայնքի բարերարների, բյուջեի և պետ բյուջեի միջոցների հաշվին համայնքում խաղահրապարակի կառուցումը կնպաստի երեխաների զարգացմանը և առաջընթացին, ինչպես նաև տարբեր միջոցառումների կազմակերպմանը:

9. Գտնել համապատասխան ֆինանսական միջոցներ համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերման համար:

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն են հանդիսանում

Առաջիկա 5 տարիների 2020-2024թթ ընթացքում համայնքի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրների լրիվ լուծման դեպքում համայնքը կարելի է տեսնել ներքոհիշյալ կարգավիճակում:

1. Համայնքի յայլադատեղերը ապահովված էլ. հոսանքով և դաշտամիջյան բարեկարգ ճանապարհներով:

2. Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնովին վերակառուցված

3. Համայնքի թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցներն և բուժամբուլատորիան վերանորոգված
4. Ներհամայնքային ճանապարհները բարեկարգված և ասֆալտապատած
5. Ոռոգման համակարգը բարելավված և ընդլայնված:
6. Համայնքում ստեղծված բավարար աշխատատեղերով
7. Գյուղատնտեսական մթերքներ վերամշակման և իրացման հնարավորություններով
8. Զարգացած մանր և միջին բիզնեսով:
9. Բարձր կենսամակարդակով բնակչություն:
10. Գործազրկության խնդիրները լուծված:
11. Լիարժեք և կանոնավոր աղբահանության:
12. Աղբատության տոկոսը նվազեցված մինչև 15%
13. Ապահովված խաղահրապարակով:
14. Զբոսայգով
15. Ձեռք է բերված համայնքի գլխավոր հատակագիծ
16. Էրեբունի կոչվող տարածքում՝ բնակիչների կողմից 1995թ-ին աճուրդով գնված հողամասերի չափագրում, նպատակային նշանակության փոփոխում և կազմակերպել աճուրդ վաճառք:

6.

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի հնգամյա զարգացման համար անմիջական նպատակները կայանում են նրանում, որ համայնքն իր բոլոր ընդգրկվող ոլորտներով՝ (գյուղատնտեսություն, անասնապահություն, կրթություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ և այլն) լինի կայացած և կատարյալ: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկելու համար առաջարկվող կապիտալ ծրագրի ցանկ.

Հ/հ	Ծրագրի անվանում	Ծրագրի արժ. (հազ.դրամ)
1	Էլ. գծի կառուցում - 5 կմ	15000.0
2	Դաշտամիջյան ճան. Բարեկարգում - 25կմ	25000.0
3	Ներհամայնքային ճան. Ասֆալտապատում - 25կմ	1250000.0
4	Համայնքի Ոռոգման ցանցի բարեկարգում – 5կմ	120000.0
5	Զբոսայգու կառուցում Խաղահրապարակի կառուցում	255000.0
6	Էրեբունի կոչվող տարածքում՝ բնակիչների կողմից 1995թ-ին աճուրդով գնված հողամասերի չափագրում, նպատակային նշանակության փոփոխում և կազմակերպել աճուրդ վաճառք:	990.0

1. Աղբատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին կազմում է 15.0%
2. Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը արտահայտված տոկոսներով կազմում է 2.5%

3. Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ արտահայտված տոկոսով կազմում է 0.2%

4 ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՍԿՆԵՐ

4.1. Երաշտ

4.2. Կարկտահարություն

4.3. Գարնանային վարարումներ

4.4 Հրդեհներ

4.5 Ցրտահարություն